

## ՏԵՂԵԿԱՆՔ

### **Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի գործունեության միջոցառումների ծրագրի և գերակա խնդիրների իրականացման ցանկերով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեին տրված հանձնարարականների կատարման ընթացքի վերաբերյալ**

Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հունվարի 12-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին» N 122-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից նախատեսվել է կատարել 2017 թվականի միջոցառումների ծրագրի՝ 82-րդ, 83-րդ և գերակա խնդիրների՝ 74-րդ, 75-րդ, 104-րդ և 105-րդ (74-րդ և 75-րդ կետերը Հայաստանի Հանրապետության կառավարության 24.08.2017թ. N 1105-Ն որոշմամբ փոխվել են 104-րդ և 105-րդ կետերի) կետերով նախատեսված միջոցառումները:

### **Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի գործունեության ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների ծրագրի՝**

**82-րդ կետով** տրված հանձնարարականի միջոցառման անվանումն է՝ «Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդի՝ ըստ նպատակային նշանակության (կատեգորիաների) հողերի 2017 թվականի կադաստրային գները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը՝ 2017թ. մարտի 3-րդ տասնօրյակում: Հանձնարարականը կատարված է ժամկետում, որի կապակցությամբ ընդունվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 30.03.2017թ. N 311-Ն որոշումը:

Որոշմամբ ՀՀ հողային ֆոնդի՝ ըստ նպատակային նշանակության հողերի, 2017 թվականի կադաստրային գները սահմանվել են ՀՀ կառավարության 2007 թվականի

ապրիլի 19-ի N 607-Ն և 2016 թվականի սեպտեմբերի 2-ի N 898-Ն որոշմունքերով սահմանված չափերով, որով ձևավորվել են ՀՀ համայնքների վարչական սահմաններում գտնվող հողերի 2017 թվականի հարկման բազաները: Այնուհետև՝ տեղական ինքնակառավարման մարմիններին են տրամադրվել ամփոփ ցուցկաները, որի հիման վրա վերջիններիս հնարավորություն է ընձեռվել հաշվարկել և գանձել 2017 թվականի հողի հարկը:

**83-րդ կետով** տրված հանձնարարականի միջոցառման անվանումն է՝ «Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդի առկայության և բաշխման վերաբերյալ 2017 թվականի հաշվետվության (հողային հաշվեկշռի) մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը՝ 2017թ. սեպտեմբերի 3-րդ տասնօրյակում: Հանձնարարականը կատարված է ժամկետում, որի կապակցությամբ ընդունվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 12.10.2017թ. N 1338-Ն որոշումը:

Հաշվետվությունը հրապարակվել է և շահագրգիռ բոլոր անձանց համար ապահովվել է դրանից օգտվելու հնարավորությունը:

### **Գերակա խնդիրներ՝**

#### **104. Հայաստանի Հանրապետության տարածքում WGS-84 (ՎԻ ՁԻ ԷՍ-84) (ArmREF02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգում քվադրանտի մոդելի ստեղծման աշխատանքներ**

«Գեոդեզիայի և քարտեզագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի «գ» և 5-րդ հոդվածի «գ» ենթակետերի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հուլիսի 21-ի N 763-Ն որոշման պահանջների համաձայն՝ ստեղծել /ArmREF02/ ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգում քվադրանտի մոդել:

Աշխատանքի հիմնական նպատակն է հանդիսացել Հայաստանի Հանրապետության տարածքի որոշ բարձրադիմ շրջաններում GPS դիտարկումներ և II դասի նիվելիրացման աշխատանքների իրականացում:

Տարբեր տեղագրագեոդեզիական, քարտեզագրական, հետախուզական, նախագծային, շինարարական և այլ աշխատանքներ իրականացնելու համար GPS դիտարկումներից ստացված WGS-84 համաշխարհային համակարգում գեոդեզիական կոորդինատները Հելմերտի բանաձևի միջոցով վերահաշվարկվում է լոկալ տեղական հարթ ուղղանկյուն կոորդինատային համակարգում, ապահովելով բարձր ճշտություն: Սակայն GPS դիտարկումներից ստացված «գեոդեզիական» բարձրությունից անցումը «նորմալ» բարձունքային նիշերի /1977թ. Բալթյան համակարգ/ չի ապահովում բարձր ճշտություն, քանի որ դա կապված է ոչ միայն հաշվարկային բանաձևերից, այլ նաև Երկրագնդի տվյալ շրջանի գրավիտացիոն դաշտից: Երկրագնդի մարմնում զանգվածների ոչ համաչափ տեղաբաշխման հետևանքով, ծանրության ուժը փոփոխվում է նրա մակերևույթի վրա ոչ օրինաչափ ձևով:

Այդ խնդիրը լուծելու համար «նորմալ» բարձրությունները հաշվարկվում են տարածքի քվադրանտի թվային մոդելից ստացված ուղղումների օգնությամբ, որոնք արտահայտում են երկրագնդի գրավիտացիոն դաշտի բարդ բնութագիրը: Մոդելը պետք է կառուցել ՀՀ տարածքում իրականացված GPS դիտարկումներից ստացված 405 կետերի «գեոդեզիական» և նույն կետերի I և II դասի նիվելիրացման աշխատանքներից ստացված «նորմալ» բարձունքային նիշերի համադրման, խորը վերլուծությունների, ինչպես նաև բարդ հաշվարկների միջոցով: Սակայն ՀՀ լեռնային շրջաններում, որտեղ նման տվյալները բացակայում են, մոդելը հաշվարկված է ինտերպոլացիոն և էքստրապոլացիոն եղանակներով, ինչը չի բավարարում ժամանակակից պահանջներին:

Քվադրանտի ճշգրտված թվային մոդելը կնպաստի բարձրացնելու ՀՀ տարածքում տեղադրված իրական ժամանակում մշտական գործող ռեֆերենց կայանների ձևափոխվող՝ տրանսֆորմացիոն պարամետրերի ճշգրտման մակարդակը, որն էլ կապահովի <<ՌՈՎԵՐ>> դիտարկման GPS կայաններից անմիջապես ստանալու կետի տեղադիրքի կոորդինատները WGS-84/ArmREF02/ ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգում:

Քվազիգեոիդի մոդելի ստեղծման աշխատանքների ավարտից հետո կստանանք տրանսֆորմացիոն նոր գործակիցները ( $Dx, Dy, Dz, wx, wy, wz$  և  $So$ ):

Քվազիգեոիդի ճշգրտված թվային մոդելը կապահովի GPS դիտարկումների «գեոդեզիական» կոորդինատներից անցում այլ էլիպսոիդային և «նորմալ» բարձունքային նիշերի՝ (ակնկալվում է ստանալ պլանային և բարձունքային դիրքի կոորդինատների մինչև 40 մմ ճշտության ձևափոխում) բարձր ճշտությամբ՝ հնարավորություն տալով գեոդեզիայի բնագավառում գործունեություն իրականացնող սուբյեկտներին խնայել ժամանակ և ֆինանսական զգալի միջոցներ:

2017 թվականի ծրագրի աշխատանքներն իրականացնելու համար կատարվել են հետևյալ անհրաժեշտ միջոցառումները՝

1. GPS 156 հիմնակետերի դիտարկում և կոորդինատների հավասարակշռում ու հաշվարկում.
2. II դասի 113.0 գծ.կմ նիվելիրացում.
3. II դասի 113.0 գծ.կմ նիվելիրացման նյութերի մշակում և 30 կետի հավասարակշռում:

Հայաստանի Հանրապետության տարածքում ՎԻՋԻԷՍ /WGS-84/ /ArmREF02/ ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգում քվազիգեոիդի մոդելի ստեղծման աշխատանքները նախատեսվում է շարունակել և ավարտել 2018 թվականին:

**105. Երևան և Գյումրի քաղաքների բազային երկրատեղեկատվական համակարգի տվյալների մշակում և ներբեռնում ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի գեոպորտալում**

«Գեոդեզիայի և քարտեզագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 4-րդ մասի «թ» և 5-րդ հոդվածի «գ» ենթակետերի, ՀՀ կառավարության 2005 թվականի հունվարի 20-ի «Հայաստանի Հանրապետության երկրատեղեկատվական համակարգի ստեղծման և վարման հայեցակարգը հաստատելու մասին» N 197-Ն որոշման պահանջների համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում ստեղծվել և ներդրվել է բազային երկրատեղեկատվական համակարգ՝ գերատեսչական տարբեր բնագավառների խնդիրների լուծման համար:

Ծրագրի նպատակը Երևան և Գյումրի քաղաքների ժամանակակից պահանջներին բավարարող բազային երկրատեղեկատվական միասնական համակարգի ստեղծումն է:

Այս ուղղությամբ 2005-2012 թվականներին Հայաստանի Հանրապետության մի շարք բնակավայրերում /այդ թվում՝ Երևան քաղաքի բոլոր վարչական շրջաններում/ իրականացվել են բազային երկրատեղեկատվական համակարգի ստեղծման աշխատանքներ, որոնց հիմնական նպատակն աշխարհագրական անվանումների, հողային ֆոնդի, անշարժ գույքի նպատակային, գործառնական նշանակության, հողատեսքերի, ջրագրության, ռելիեֆի, գծային ենթակառուցվածքների օբյեկտների մասին քարտեզագրական և տեքստային տվյալների տեղեկատվական բանկի ստեղծումն ու կառավարումն է: 2013 թվականին սկսվեց և 2016 թվականին ավարտվեցին Գյումրի քաղաքի բազային երկրատեղեկատվական համակարգի քարտեզագրական հիմքի ստեղծման աշխատանքները:

Աշխատանքների հիմնական նպատակը Հայաստանի Հանրապետությունում ժամանակակից պահանջներին բավարարող բազային երկրատեղեկատվական համակարգի ստեղծումն է, որն անհրաժեշտ է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին տնտեսության տարբեր ոլորտների խնդիրների արդյունավետ լուծման, հանրապետության բնական և տնտեսական ռեսուրսների վերաբերյալ տվյալների (ինչպես քարտեզագրական, այնպես էլ տեքստային) պետական միասնական տեղեկատվական բանկի ստեղծման և հանրապետության ռեսուրսների կառավարման արդյունավետության բարձրացման համար:

Մույն աշխատանքի նպատակը Հայաստանի Հանրապետության Երևան և Գյումրի քաղաքների նախորդ տարիներում ստեղծված բազային երկրատեղեկատվական համակարգի համար տվյալների նույնականացման, տեքստային ֆորմատավորման, համակցման և նոր ծրագրային միջավայր տեղափոխելու աշխատանքների կատարումն է Երևան քաղաքում ժամանակակից պահանջներին բավարարող բազային երկրատեղեկատվական միասնական համակարգի ստեղծման նպատակով:

Հաշվի առնելով, որ Երևան քաղաքի ըստ վարչական շրջանների բազային երկրատեղեկատվական համակարգի քարտեզագրական հիմքի և տվյալների բազայի

ստեղծման աշխատանքները իրականացվել են 2005-2012թթ., անհրաժեշտություն է առաջացել իրականացնել մի շարք միջոցառումներ գեոպորտալ ներբեռնելուց առաջ:

Աշխատանքները տարանջատված են հետևյալ հերթականությամբ.

- Շերտերի և տվյալների բազայի ֆոնտի տեքստային ֆորմատավորում,
- Քարտեզագրական նյութի համակցում և համադրում,
- Գրաֆիկական շերտերի աշխատանքների միաբերում և նույնականացում,
- Տվյալների բազայի կառուցվածքի միաբերում մեկ ընդհանուր կառուցվածքի շուրջ (սյունյակների անունների, ձևաչափերի և այլ բնութագրերի նույնականացում),
- Տվյալների բազայի աղյուսակների վերնագրերի և քարտեզագրական շերտերի, անվանումների լատինատառ գրառում:
- Տվյալների որոնման չափանիշների ֆիքսում:

Այս աշխատանքների իրականացման արդյունքում ունենք.

- բոլոր շերտերում ներբեռնված, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից արդեն իսկ հավաքագրված գծային ենթակառուցվածքներին վերաբերող տվյալներ,
- գծային ենթակառուցվածքները տնօրինող (շահագործող) կազմակերպությունների համար առցանց դիտման և որոնման հնարավորություններ,
- Երևան և Գյումրի քաղաքների միասնական տեղեկատվական քարտեզագրական հիմքի ձևավորման համար,
- Երևան և Գյումրի քաղաքների միասնական գեոպորտալի ստեղծում,
- բազային ԵՏՀ-ի տեղեկատվական բանկի տվյալների հավաքագրման և մշակման ստանդարտացման աստիճանի բարձրացում,
- տեղեկատվական բանկի պահուստային պատճենների ստեղծման գործընթացի հեշտացում, օպերատիվության բարձրացում և ծախսերի նվազեցում,
- հաղորդակցողիների ցանցերի նախագծման և զարգացման՝ այդ թվում տարածական վերլուծություն և ցանցերի մոդելավորման համար,
- Երևան և Գյումրի քաղաքների ԵՏՀ տեղեկատվական տվյալների տեղադրում գեոպորտալում:

2017 թվականի ծրագրի աշխատանքներն իրականացնելու համար կատարվել են հետևյալ անհրաժեշտ միջոցառումները՝

1. Երևան և Գյումրի քաղաքների բազային ԵՏՀ-ի համար գրաֆիկական շերտերի և տեքստային տվյալների նույնականացում և ֆորմատավորում – 26758 հա.

2. Երևան քաղաքի վարչական շրջանների, ըստ տարիների, երկրատեղեկատվական համակարգի քարտեզագրական հիմքի համակցման ընթացքում հայտնաբերված անճշտությունների ուղղում – 22328 հա.

3. Ուղղված քարտեզների նոր ծրագրային միջավայր տեղափոխելու համար նախապատրաստական աշխատանքներ – 26758 հա.

4. 1:2000 մասշտաբի տեղագրական հատակագծերի ստեղծման նպատակով ՀՀ տարածքի օդալուսանկարահանման նյութերի վերծանում (Սպիտակ քաղաքի - 744.51 հա և Սևան քաղաքի - 1160.0 հա):